ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին 11 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը, Համլետ Գևորգյանը, Վրույր Այվազյանը, Արտյոմ Տոնոյանը, Թամարա Գրիգորյանը, Վարսենիկ Քալաշյանը:

Բացակա էին՝ Տիգրան Արոյանը, Ալիկ Սարգսյանը,

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Գոռ Աղաջանյանը Կարեն Լալազարյանը, Մարտին Ալավերդյանը,համայնքապետարանի աշխատակիցներ ՝

Ա.Մարիկյանը, Մ.Մեսրոպյանը , Ս.Ղուկասյանը, Ս.Սուքիասյանը

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սերինե Նալբանդյանը</u>:

Համայնքի Ղեկավարը ներկայացրեց օրակարգը, ավագանին քննարկեց և դեմ քվեարկեց օրակարգին՝ առաջարկելով օրակարգից հանել «Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքնակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հարցը և օրակարգ ընդգրկել «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելու մասին» , « Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 131-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցերը:

Քննարկումից հետո ավագանին ՝ 13-կողմ, 0-դեմ ձայներով՝ հաստատեց նոր օրակարգը:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ.Խ.Վարդանյան/

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
/Զեկ.Մ.Մեսրոպյան/

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/

4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2025թ. տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/

5.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ.Մ.Մեսրոպյան/

6.Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
/Մ.Մեսրոպյան/

7. ՀՀ Լոռու մարզի «Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը ժամանակավորապես իրականացնելու վայրի վերաբերյալ:
/Ս.Սուքիասյան/

8.Գյուլագարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Գյուլագարակ համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 90-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
/Զեկ.Ս.Նալբանդյան/

9.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու օրինակելի կանոնակարգը ընդունելու և Գյուլագարակ համայնքի ավագանու 06.12.2022թվականի թիվ 78 -Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

10.Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 131-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ.Ս.Նալբանդյան/

11.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելու մասին:
/Զեկ.Սարգիս Ղուկասյան/

12. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:
/ԶԵԿ.Ս. Նալբանդյան/

Լսեցին՝

/

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Խ.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2025թ. փետրվարի 11-ի հերթական նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ-13, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 01-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև հաշվի առնելով 31.01.2024թվականին կայացած հանրային լսման արձանագրությունը՝ Գյուլագարակ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-5
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 02-Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 ենթակետով , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով՝ **Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-5
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 03-Ն/

Լսեցին՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. Ռ. Օհանյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1 հոդվածով , հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թվականի մարտի 17-ի «Գյուլագարակ համայնքի 2023-2027 թվականի զարգացման
ծրագրի հաստատման մասին» թիվ 26-Ն որոշումը և Հայաստանի
Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության ներկայացրած համայնքի տարեկան աշխատանքային պլանի
մշակման մեթոդական ուղեցույցը՝ **Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է .**
1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2025թվականի տարեկան աշխատանքային պլանը՝
համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Ավագանու անդամ Գոհար Պառավյանը քվեարկության ժամանակ բացակայում էր :
ԿՈՂՄ-7, ԴԵՄ-1, ՁԵՌՆՊԱՀ-4
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 04-Ն/

Լսեցին՝
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿ.Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի
5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Ավագանու անդամ Գոհար Պառավյանը քվեարկության ժամանակ բացակայում էր :

ԿՈՂՄ-7, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-5
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 05-Ն/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. Մ. Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝
համայնքի ավագանին որոշում է.
1.Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամ Գոհար Պառավյանը քվեարկության ժամանակ բացակայում էր :

ԿՈՂՄ-7, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-5
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 06-Ա/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
/Զեկ. Ռ. Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի42-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ քաղաքացիական» օրենսգրքի 660 հոդվածը, համայնքի ավագանին որոշում է.
1. «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը ժամանակավորապես իրականացնելու նպատակով տալ համաձայնություն համայնքի կողմից վարձակալելու ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի բնակիչ Ռուսլան Սանասարի Օհանյանի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի Կենտրոնական փողոց թիվ 33/1 հասցեում գտնվող բնակելի տունը, ամսական 90000/իննսուն հազար /ՀՀ դրամ վարձավճարով , մինչև՝ 30.09.2025 թվականը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Ավագանու անդամ Գոհար Պառավյանը քվեարկության ժամանակ բացակայում էր :
Քանի որ հարցը վերաբերվում էր ավագանու անդամ Ռ. Օհանյանի սեփականություն հանդիսացող բնակելի տանը, ուստի տեղի էր ունենում շահերի բախում: Համաձայն տեղական ինքնակառավարման մասին« ՀՀ օրենքի 21.1 հոդվածի՝ Ռ. Օհանյանը չմասնակցեց քվեարկությանը:

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 07-Ա/

Լսեցին՝
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 90-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. Մ. Նալբանդյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ. «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել Գյուլագարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝
1)Ռուսլան Օհանյան-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
հանձնաժողովի քարտուղար՝
2)Ալվարդ Դավոյան-համայնքապետարանի սոցիալական աշխատող
հանձնաժողովի անդամներ՝
3) Սերինե Նալբանդյան – աշխատակազմի քարտուղար
4)Գայանե Վանյան-Վարդաբլուրի ամբուլատորիայի ընտանեկան բժիշկ
5) Ռիտա Եղինյան- ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ստեփանավանի բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ
6) Տեր Մերուժան քահանա Սողոյան-համայնքի հոգևոր հովիվ
7)Լուսինե Մատինյան-Գյուլագարակի միջնակարգ դպրոցի ՄԿԱ համակարգող
8)Անահիտ Սարգսյան-ՄՍԾ Ստեփանավանի տարածքային կենտրոնի ավագ սոցիալական աշխատող
9)Ռոզիտա Խաչատրյան -«Ապրելու Երկիր» խմբակցության գործավար
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ավագանու ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին Գյուլագարակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 90 -Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ավագանու անդամներ Գոհար Պառավյանը և Թամարա Գրիգորյանը քվեարկության ժամանակ բացակայում էին :
ԿՈՂՄ-10, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 08-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. Ս. Նալբանդյան/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Գյուլագարակ համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ավագանու « ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին » 06.12.2022 թվականի թիվ 78-Ա որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Ավագանու անդամներ Գոհար Պառավյանը, Թամարա Գրիգորյանը, Վարսենիկ Քալաշյանը, Արտյոմ Տոնոյանը քվեարկության ժամանակ բացակայում էին :
ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 09-Ա/

Լսեցին՝
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 131-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-
րդ և 28-րդ կետերով , Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերին մասին» ՀՀ օրենքի 33-
րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ,որոշում եմ.
1. Գյուլագարակ համայնքի ավագանու 17.12.2024թ. թիվ 131-Ա որոշման հավելվածը խմբագրել նոր
բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Ավագանու անդամներ Գոհար Պառավյանը, Թամարա Գրիգորյանը, Վարսենիկ Քալաշյանը,
Արտյոմ Տոնոյանը քվեարկության ժամանակ բացակայում էին :
ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 10-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս.Ղուկասյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ
կետով,«Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ
հոդվածներով,«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով,հաշվի առնելով
համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը,Գյուլագարակ համայնքի
ավագանին որոշում է՝

1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը

աճուրդ վաճառքով օտարելուն

1) 1/մեկ/ լոտով 0.02661 հա հողամասը, նպատակային նշանակությունը բնակավայրերի,
գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-013-0004-0018,
մեկնարկային գինը 130000 /մեկ հարյուր երեսուն հազար / ՀՀ դրամ:

2) 2/երկու/ լոտով 0.29955 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
գործառնական նշանակությունը՝բնակելի կատուցապատման, ծածկագիր 06-013-0004-0005,
մեկնարկային գինը 720000 /յոթ հարյուր քսան հազար / ՀՀ դրամ:

3) 3/երեք/ լոտով 0.30681 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի,
գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-013-0009-0018,
մեկնարկային գինը 740000 /յոթ հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ Գոհար Պառավյանը, Թամարա Գրիգորյանը, Վարսենիկ Քալաշյանը,
Արտյոմ Տոնոյանը քվեարկության ժամանակ բացակայում էին :
ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 11 -Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Հեկ. Մ. Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել 2025 թվականի մարտի 14 - ին, ժամը՝ 11:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Ավագանու անդամներ Գոհար Պառավյանը, Թամարա Գրիգորյանը, Վարսենիկ Քալաշյանը, Արտյոմ Տոնոյանը քվեարկության ժամանակ բացակայում էին :

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 12 -Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐՏՈՒՂԱՐ

ՄԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ